ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը հոկտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ
Աբովյան քաղաքի 61-րդ տարեդարձի առիթով

Սիրելի՛ աբովյանցիներ.

Այսօր մենք տոնում ենք մեր հարազատ քաղաքի 61-րդ տարեդարձը: Նախորդ տարի, Արցախի դեպքերով պայմանավորված, Աբովյանի հոբելյանական տարեդարձի միջոցառումները չեղարկվեցին: Համայնքը ներգրավվեց արցախահայությանը ընդունելու պատասխանատու գործում և այսօր, նաև նրանց հետ նշում ենք մեր ջերմ ու հյուրընկալ քաղաքի տոնը: Աբովյանը հնագույն ակունքներ ունեցող երիտասարդ ու գեղեցիկ քաղաք է, որտեղ տարբեր սերնդի ներկայացուցիչներ կողք կողքի բնակվում են որպես մի մեծ ընտանիք:

Սիրելի՛ աբովյանցիներ.

Ուզում եմ իմանաք, որ մեր մեծ ընտանիքում յուրաքանչյուրդ ուշադրության կենտրոնում եք:

Մենք շարունակելու ենք աշխատել տարեցների, երիտասարդների, երեխաների և առհասարակ բոլորի համար հարմարավետ ու բարեկարգ միջավայր ստեղծելու ուղղությամբ. համատեղ ուժերով, սիրով ու հպարտությամբ շարունակելու ենք շենացնել ու զարգացնել մեր սիրելի համայնքը:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր սրտացավ ու հոգատար բնակիչներին. ամենատարբեր ոլորտներում շնորհալի ու նպատակասլաց աբովյանցիներին. յուրաքանչյուրդ ձեր գործունեությամբ ճանաչելի, մրցունակ ու գրավիչ եք դարձնում մեր Աբովյանը:

Կրկին ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Աբովյան քաղաքի 61-րդ տարեդարձի կապակցությամբ: Խաղաղություն, բարեկեցություն և ամենայն բարիք եմ ցանկանում մեր սիրելի քաղաքին, համայնքին ու հայրենիքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ